

կերութեանց մասնակցութիւնը, յաճախ ճանապարհորդութիւն դէպի գաւառները, դաստիարակութիւններ և քարոզներ՝ տարեկան 80—100, լարուած նկարագրին ևսակց այն յանձնաժողովի մէջ, որի նպատակն էր խափշիկների տեղափոխութիւնը, ընդհարումն և վճեր, որոնցից մի քանի օրինակ տեսանք, — այս բոլորը վերջ ի վերջոյ խախտեցին նրա իրնէ առողջ և պինդ կազմուածքը 50 տարեկան հասակում նա կատարեալ ծերունի էր երևում: Ծուտով երևան եկան թոքախտի նշանները. և 1859-ի յունվարի 7-ին, երբ Պարկեր բեմ էր բարձրանում առաջին արինահասութիւնը տեղի ունեցաւ: Նորա բարեկամները սարսափահար այդ երևոյթով, համոզեցին մի տարով հեռանալ դէպի Անտիլեան կղզիները: Պարկեր յուսով բաժանուեց իւր սիրելի հօտից, բայց յոյսը այս անգամ իրան խաբեց. նա կրկին չտեսաւ ոչ իւր բարեկամներին և ոչ թշնամիներին. կենդանի խօսքը լռեց, այժմ հօտին միակնարողը միայն նորա նամակներն էին:

Ս. Յ.

(Նառնակի)

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Մշակողական աշխարհի երկու լուսաւորիչներ՝ Արարի և Մեթոդիոսի տօնը վերջին յորեկեանից ի վեր գնալով աւելի ու աւելի ընդհանրանում և համազգային եկեղեցական տօն է գառնում Ռուսաստանում: Այս տարի մայիսի 11-ին այդ տօնը Պետերբուրգի մետրապոլիտ Սրբ. Անտոնիյի կարգադրութեամբ առանձին շքով տօնուեցաւ մայրաքաղաքում, Սրբ. մետրոպոլիտ ցանկութիւնն է, որ այդ տօնը ընդհանուր գպրոցական տօն նկատուի գոնէ բոլոր հոգևոր և ծխական գպրոցների համար: Աստի Կազանի մայր եկեղեցում, ուր նա մի խումբ բարձրաստիճան հոգևորականների գործակցութեամբ պատարագ մատոյց՝ երկու հազարից աւելի գպրոցականներ էին ժողովուած և մեծ բաղմոնութիւն, և հոգեպարար աղղեցութիւն արաւ ամէնքի վերայ այս հանդէսը, Առանձին նշանակութիւն ունեցաւ տօնը մանաւանդ Հոգևոր ձեմարանի հա-

մար, որովհետեւ այդ օրն առաջին անգամ եպիսկոպոսական պատարագ մատոյց ձեմարանի նոր տեսուչ Բորիս, որ մայիսի 9-ին եպիս. ձեռնադրութիւն էր ընդունել, Պատարագից յետոյ հանդիսաւոր ճաշկերոյթ տեղի ունեցաւ:

— Ռուսաց մեծանուն բանաստեղծ Պուշկինի ծննդեան հարիւրամակը, որ համազգային մեծ հանդիսով տօնուեցաւ ամբողջ Ռուսաստանում և արձագանք գտաւ նոյն իսկ արտասահմանում՝ զանազան կողմերով դժուար դրութեան մէջ էր դնում եկեղեցւոյ ներկայացուցիչներին: Յայտնի է որ Պուշկին շատ անկանոն կեանք է վարել և առանձնապէս բարեկամ չէ եղել եկեղեցւոյն: հոգևորականութիւնը չէր կարող անտարբերութեամբ դիտել թէ ինչպէս նորա գրուածներն թուում անխտիր, և ոմանց կողմից գուցէ նոյն իսկ չարամիտութեամբ տարածուում էին այնպիսիները, որոնց մէջ ծագում է ուս. քահանայ անվայելուչ լինում է գործածած եկեղեցական պաշտօնի նկատմամբ: Այնուամենայնիւ թէ երկու մայրաքաղաքներում և թէ Սվետոգորսկի վանքում, ուր թաղուած է Պուշկին՝ հանդիսաւոր հոգեհանգիստների տեղի ունեցան բարձր. հոգևորականութեան նախագահութեամբ և բարձրաստիճան պետ. անձանց մասնակցութեամբ: Սրբ. Անտոնիյ մետրապոլիտն այս առթիւ խօսեցած ճառի մէջ յիշելով բանաստեղծի փոթորկալից կեանքը և եղերական վախճանը, ուր եկեղեցական տեսակէտից շատ բան դատապարտելի էր՝ յորդորում էր չմոռանալ, թէ որչափ մեծ դեր է խաղում այստեղ ժամանակի և շրջապատող հասարակութեան աղղեցութիւնը, թէ ինչպէս դորա հակառակ նորա հոգու մէջ շատ լուսաւոր, մաքուր, զուտ մարդկային և քրիստոնէական գծեր կային, որոնք աւելի երևան եկան նորա կեանքի վերջին օրերում, և վերջապէս՝ թէ ինչպէս դժուար է առհասարակ որոշել ո՞վ է մեղաւորն ու ո՞վ արդարը Երկնաւոր Դատաւորի առաջ. այլ միայն քրիստոնէական պարտք պէտք է համարել՝ ջերմեռանդ սրտիւ աղօթել հանգուցեալի հոգւոյ փրկութեան համար:

— Ռուս հասարակութեան զանազան շրջաններում մեծ ուրախութիւն է պատճառել նորերս արձակուած Բարձրագոյն հրամանը, որի հիման վերայ ծրագրի պէտք է մշակուի յանցաւորներին Սիրիւր քրտորելու սովորութիւնը փոխարինել ուրիշ պատժներով, Սիրիւր իւր բնական հարստութիւններով վերջին ժամանակներս շատ առաջ է գնացել և ընդհանուր ուշադրութիւնը գրաւել, Խոյլ տալ, որ այդպիսի հարուստ և մեծ ապագայ խոստացող երկիր աւաղակների ու անպիտանների հայրենիք գառնայ և մնայ՝ շատ կողմերից հարկաւ ցանկալի չէ, Բայց հեշտ չի լինի նաև այն խնդիրը լուծել, թէ ինչ անեն այսուհետև հազարաւոր յանցագործներին, ինչպէս ապահովեն հասարակու-

Թիւնը նոցանից և նոցա ևս ուղղուելու միջոց տան։ Այդ բոլորին բանտերի մէջ տեղաւորել՝ հսկայական ծախքեր կնստի և նորանոր անյարմարութիւններ ու չարիքներ առաջ կրերէ։ Սակայն այսպիսի խնդիրներ վաղուց քննուել և որոշ չափով մշակուել են եւրոպական միւս քաղաքակրթութեան երկրներում։ Նոր ծրագրի մշակողները օգուտ կքաղեն անշուշտ նոցա ուսումնասիրութիւնից և փորձառութիւնից։ և յուսալի է որ բանտերի կազմակերպութեան ու յանցաւորների վիճակի բարւոքման խնդիրը Ռուսաստանում ևս աւելի օրինական խելացի ու մարդասիրական հիմունքների վերայ կգորուի։

— Ինչպէս որ անցեալ տարի հացի պակասութիւնից Ռուսաստանի մի քանի արեւելեան մեծ նահանգներ խիստ շատ տառապանք կրեցին և մանաւանդ վերջին ժամանակ յետին ծայր թշուառութեան դուռը հասան։ այնպէս և այս տարի վատ հունձ և ուրեմն նոյն տառապանքների կրկնութիւն է սպասուում ուրիշ մի երկու հարաւային նահանգների համար։ Այս նկատմամբ մամուլը աշխատում է զանազան միջոցներ ցոյց տալ չարիքի առաջն առնելու։ Եւ թիւս այլոց С. Иер. Вѣдомости թերթը ձրի զրամական օժանդակութիւնները անրաւարար և շատ դէպքերում վնասակար իսկ համարելով՝ առաջարկում է օգուտ քաղել այն հանգամանքից, որ վատ հունձի ժամանակ աշխատանքը խիստ պակասում է և աշխատող ձեռներն աւելանում։ և զանազան հասարակական բարենորոգումներ անելու ջրանցքներ և ջրհորներ փորելու ճանապարհներ բանալու ճահիճների ցամաքեցնելու ծառեր տնկել ևն։ այդպիսով տուած օգնութիւնը կրկնակի բարի հետեանք կունենայ՝ ազգաբնակչութիւնը ծուլութեան չի սովորի և ուրիշ տարիների համար նորանոր զիւրութիւնների կստեղծուին քնութեան չարիքների դէմ կուռելու համար։

— Կրօնի դասատուների մէջ վաղուց միտք կոյ կորստւորւումներ հաստատելու որպէս զի կարելի լինի աւելի համարաշխ կերպով և փոխադարձ օգնութեամբ գործ յառաջ տանել։ Այդ միտքն արդէն իրականացած է Բագուում՝ Բագուի նահանգի ուսուցչական կոնսուլցիոնների համար։ Այսպիսի տեղերում առանձին կարիք է լինում կորստւորւում մանաւանդ այն տեսակետից, որ գործելով աղանդաւորների և տարրեր ազգութիւնների մէջ՝ կրօնուսուցչներն ստիպուած են յաճախ ծրագրից շեղուել և տեղական պայմանների համեմատ ինքնուրոյն միջոցների ձեռնարկել։

ԿԼԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ։

Պապական ամբողջ կրկին առիթ գտաւ արեւմտեան աշխարհի ուշադրութիւնը իւր վերայ դարձնելու և բարեպաշտ կաթողիկէ ժողովրդի մէջ իւր

հեղինակութիւնը բարձրացնելով հանգերձ՝ մեծամեծ զրամական օգուտների դուռ բանալու իւր համար։ Ապրիլ 29-ին, Համբարձման տօնին, Հռոմի չորս գլխաւոր եկեղեցիներում շատերի համար անսպասելի կերպով կարգացուեցաւ պապի մի նոր կենդակը որ առաջիկայ 1900 թ.-ը յորեկենական օրագան՝ տարի է հաշակում։ Այս յորեկենականի սկիզբը գրել է Բոնիֆատիոս Ը. Նշանաւոր պապը որ Դանտեի զօնախի մէջ ամենախոր խորշերից մեկին՝ «սրբալիւծառների» տանջարանին է արժանացել։ Նա «յորեկենական» հրատարակեց 1300 թ.-ը և հետեանքն այն եղաւ որ երկու միլիոնից աւելի ուխտաւորներ յաճախեցին Հռոմ՝ անչափ նուէրներ բերելով քաւութեան թղթեր ստանալու համար։ Պատմում են որ այդ տարին ս. Պետրոս և ս. Պօղոս մայր եկեղեցիներում ուխտաւորների խոնումն այնչափ սաստիկ էր որ յաճախ տանեակ մարդոց մեռած էին դուրս տանում և երկու պաշտօնականներ առաւօտից մինչև երեկոյ թիակները ձեռնին աշխատում էին նոցա ձգած զրամները դիզելու համար։ Այնուհետև սկսեցին աւելի ու աւելի յաճախ յորեկենական հրատարակել՝ 50, 33, 25 տարին միանգամ և այդպէս շարունակուեցաւ մինչև 1775 թ.-ը։ 1800 թ.-ին ֆրանսիական յեղափոխութեան արհաւիրքների պատճառաւ յորեկենական չեղաւ։ Իսկ վերջին անգամ ամենայն հանդիսաւորութեամբ կատարեց այն Լեոն ԺԲ. 1825 թ.-ին։ Ներկայ պապը որ այդ միջոցին 15 տարեկան պատանի էր՝ առանձին հրճուելով է յիշում յորեկենական հանդէսների իւր վերայ թողած տպաւորութիւնը և լինելով առհասարակ ջերմ երկրպագու Լեոն ԺԲ.-ի՝ կարեւոր է համարում այժմ հետեւել նորա օրինակին։ Ինչպէս նա յեղափոխութիւնից յետոյ աշխատում էր այդ միջոցով բարեպաշտութիւն վերանորոգել՝ ինքն ևս ներկայ չար ժամանակի համար գործ է դնում այդ ազգու միջոցը։

Պոնդակի մէջ նա ասում է. «Հետեւելով մեր նախորդներին՝ հոռմէական պապերին և մեր պատուաբժան եղբարց, Հռոմի ս. եկեղեցւոյ կարգիւնայնների հետ միարան՝ որոշում և յայտարարում ենք Ամենակարող Աստուծոյ զօրութեամբ, ս. Պետրոս և Պօղոս առաքելայնների և մեր անունով՝ ընդհանուր հանդիսաւոր յորեկենական տարի և կամենում ենք որ այստեղանից որոշուած և յայտարարուած համարուի նա պէտք է սկսուի այս սուրբ քաղաքում 1899 թ.-ի Ծննդեան տօնի ճրագաւուցին և տէ է մինչև 1900 թ.-ի ծննդեան ճրագաւուցը։ Թոյ բարեյաջող ընթացք ունենայ նա ի փառս Աստուծոյ, ի փրկութիւն հոգւոց և յօգուտ եկեղեցւոյ։—Այս յորեկենական տարւոյ համար մենք յօժարում և տալիս ենք ողորմածութեամբ առ Տէր՝ յիսկաւար յողորմելու քաւումն և ներումն

մեզաց երկու սեռի այն բոլոր քրիստոնեայ հաւատացեալներին որոնք ճշմարիտ զգլմամբ կիստոգանուին ու կհաղորդուին և դոնէ օրը մի անգամ քսան օր շարունակ՝ ընդմիջելով կամ առանց ընդմիջման հասարակ լինի կամ տոն օր իւրաքանչիւր օրուայ իրիկնսօժամից հաշուած մինչև յաջորդ օրուայ երեկոյեան մութը—ս. Պետրոս և Պօղոս առաքեալներին Լատերանի ս. Յովհաննու և ս. Մարիամ Մաջջեօրէ (Մեծ) մայր տաճարները կայցելեն, եթէ Հռոմի բնակիչ են։ Իսկ եթէ զբնից եկած են՝ թող նոյն տաճարները դոնէ 10 անգամ վերև ցոյց տուած կարգով այցելեն։ Ամէնքը պէտք է բոլոր սրտիւ աղօթեն Աստուծուն՝ եկեղեցւոյ բարձրացման, հերետիկոսների ջնջման, կաթողիկէ իշխանների համբաւխութեան և քրիստոնեաների բարօրութեան համար... Ձեզ ամէնքիդ ուրեմն սիրելի որդիք, ուր ե գտնուում էք։ Տրախիում է Հռոմը սիրով դէպի ինքը, եթէ հնարաւոր է ձեզ համար՝ գալ... Յիսուս քրիստոս աշխարհի Փրկիչը, ընտրել է միայն և եթէ Հռոմ քաղաքը բոլոր ուրիշ քաղաքների մէջ մի վսեմ և աւելի քան մարդկային կոչման համար և սրբազործել Իւր համար։ Նա այնտեղ Իւր թողաւ որութեան ամօռանիստը հաստատեց՝ ոչ առանց երկար և խորհրդաւոր նախապատրաստութեան։ այնտեղ պէտք է կանգնէր ընդ միշտ նորա կամբով Իւր տեղապահի ամօռը, Նա կամենում էր որ երկնային ուսման լոյսը բարեխիղճ և անարատ կերպով պահպանուի այնտեղ և այնտեղից, ինչպէս իւր սկզբից և վսեմ աղբիւրից՝ տարածուի հեռուն, ամրողջ աշխարհի վրայ։ այնպէս որ՝ ով հոգովեական հաւատից անջատուի անջատուած լինի Քրիստոսից։ Հռոմի սրբութիւնը աւելացնում են նաև ուրիշ բաներ, կրօնի ամենահին յուշարձանները, նորա տաճարների արտակարգ վիճութիւնը, առաքելոց զիտաւորների գերեզմանները, կատակոմները, որոնց մէջ հերոս նահատակներ ընջում են։ Այն հաւատացողը որ բոլոր այս յիշատակարանների ձայները լսելու կարողութիւն ունի կզգայ որ Հռոմում չէ մնում այնպէս ինչպէս ծանապարհորդը մի օտար քաղաքում այլ ընդհանգաւակն, որ տանու է այնտեղ ինչպէս իւր հայրենիքում և Աստուծոյ օղնութեամբ նա կվերադառնայ աւելի լաւացած քան եկել էր...»

Այնուհետև պապը կարգադրութիւն է անում կոնգակի արագ տարածման մասին շար ժամանակի դէմ է դանդաղեցնում և ընդ միջի այլոց նա չի մոռանում իւր քանատիկալ դրութեան և Իտալիոյ քաղաքական իշխանութեան կողմից սպասելիք արգելքների մասին ակնարկներ անելու։ սակայն յայտնի է որ խտրական կառավարութիւնը ինչպէս միշտ այնպէս և այժմ կատարեալ ազատութիւն կտայ նորան իրեն հոգեւոր պետ գործելու և ուրախ լինելով այն նիւթական հարստութեան նկատմամբ որ օտարեր-

կացի ուխտաւորների բազմութիւնը Հռոմ կրերէ՝ կցանկանար նաև կրկին մի անգամ ապացուցանել կաթողիկէ աշխարհի առաջ, որ պապի դրութիւնն այնպէս էլ դէշ չէ, ինչպէս հաւատացնում է նա ինքը։ Վարելի էր կարծել, թէ Փարիզի աշխարհահանդէսը արդիւք կլինի շատերին Հռոմ գալու։ բայց սպասելու է ընդհանգաւակն, որ աւելի կնպաստէ և ոչ միայն բարեպաշտ կաթողիկէներ այլ նաև բողմաթիւ աշխարհամիտ կամ օտարադաւան ծանապարհորդներ՝ աշխարհական վայելքից յետոյ կցանկանան նաև այդ հոգեւոր վայելքին մասնակից լինել։ Յաւիտենական քաղաքը իւր յորդիկական պիրծութեան մէջ տեսնել, Երդէն Հռոմում հաշիւ են անում որ ուխտաւորների թիւը հաւանականօրէն 3 միլիոնից պակաս չի լինի և բոլոր առևտրականները, հիւրանոցի տէրերը, կառապանները ձեռները շփում են ուրախութեանից և «բարիպաշտութեամբ» լեցում մտածելով թէ ինչպիսի առատ հունձ է սպասում իրենց։ Թէ արդեօք շատ ուխտաւորներ «լաւացած» կվերագոռնան հայրենիք՝ կասկածելի է հարկաւ։ Բարձր ցոյց է տուել ընդհանգաւակն, որ Լուտերից սկսած ով փոքր ի շատե երկար ժամանակ է մնացել և ի մօտոյ ծանօթացել Հռոմի կեանքին՝ զգուշեցում և զայրոյթով է հեռացել և կարդինալ Հոհենլոյէն մի առանձին հրաշք էր համարում որ ինքը 23 տարի ապրել էր այդտեղ և քրիստոնէական հաւատը չէր կորցրել։

Հռոմէական եկեղեցւոյ մէջ ընդաց թողութեան իրաւունքի չարաշար գործածութիւնն այնչափ յայտնի է, որ այս կողմից պապի կոնդակը առանձին ուշադրութիւն չէ գրաւում։ բայց բողոքական թերթերը, նոյն իսկ կաթողիկէներից ամենք, բողոքում են «հերետիկոսների ջնջում» դարձուածի դէմ։ որովհետև հռոմէական տեսակէտից բողոքականները հերետիկոս են, ուրեմն պապը ցանկութիւն է յայտնում ինկվիզիցիան վերականգնած և նոցա բոլորին կրակի մատնած տեսնել։

— Հակահռոմէական շարժումը Աւստրիոյ մէջ շարունակում է մօթեր դրադեցնել։ Շարժումը կանգնեցնելու համար կառավարութեան գործ դրած ջանքերը մեծ հետեանք չունեցան։ կարգադրուած էր ի միջի այլոց օտարերկրացի բողոքական բարոզիչներին հեռացնել սահմաններից և մի քանի ազդեցիկ պատուորներ հեռացուցան, որ զգալի հարուած էր Աւստրիոյ բողոքական եկեղեցւոյ համար, սրովհետև նորա սեփական ուժերը շարժումն սկսելուց առաջ ևս պակաս էին։ բայց մնացողներն աւելի եռանդով են շարունակում իրենց գործունէութիւնը։ Մաքսատներում առանձին ուշադրութիւն են դարձնում բողոքականութիւն տարածուելու համար դրսից ուղարկուած գրուածները դրաւելու։ ինչպէս և դրաւաճառների մօտ եղածները դրաւեցին։ Վաթողիկէ հոգեւորականութիւնն

ի հարկէ նոյնպէս անգործ չէ մնում. Գրուշա կարգինայի նախագահութեամբ մի մասնաժողով է կազմած՝ հակառակ շարժում յառաջ բերելու նըպատակով. Կոպպ կարգինայի մի նոր զարդ է բանում, որպէս զի գերմանացի քահանաների թիւն տեւանայ. ամէն օր բազմաթիւ թաւոցիկ թերթեր են լոյս տեսնում. որոնք կրկնում են Լուսթերի և ամուղը բողոքականութեան դէմ անթիւ անգամ կրկնուած զրպարտութիւնները անուանարկում են նոր շարժման մէջ մասնակցողներին և ինչ. Կառավարութիւնը ստիպուած էր այսպիսի գրուածներէջ դռնէ ծայրայեղները գրաւել. իսկ Գերմանական պետ. ժողովը, երևի կրկին այս շարժման ազդեցութեան ներքոյ՝ վճռել է պատժի ենթարկել նոցա, որոնք կզրպարտեն Լուսթերին, թէ անձնասպանութիւն է գործել. — Այսպիսի զրպարտութիւնների դէմ ազդու կերպով բողոքեցին Աւստրիոյ 75 բողոքական պատուիրներ իրենց ծուխերի հետ միասին, համարձակօրէն խոստովանելով իրենց դաւանութիւնը և յոյս յայտնելով, որ նա իւր ներքին ճշմարտութեան շնորհիւ կ'յաղթէ շատ արդելքների և շատերին կ'գրաւէ: Գորա փոխարէն բողոքական եկեղեցւոյ բարձր. ատենը Ալեքսանդրով պահպանում է իւր նախկին անտարբեր, գրեթէ թշնամական, դիրքը շարժման նկատմամբ. այսպէս օր մի շրջաբերականով նա պատուիրում է ստորագրեալ եկեղեցականներին՝ թող չտալ երրէք, որ մի օտարերկրացի աստուածարան իրենց համայնքների մէջ գործէ: Նաև այն դէպքում, երբ նա պաշտօնական ճանապարհով իրաւունք ձեռք բերած լինի Աւստրիայում մնալու, Այսպիսի վերաբերումը մեծ զայրոյթ է պատճառում հարկաւ բողոքական շրջաններում. — Աւերջին տեղեկութիւններին նայած Հոռմէական եկեղեցւոյ ծոցից ելածների թիւն արդէն տասը հազարն անցնում է. սոցա թուում կան նաև աչքի ընկնող անձնաւորութիւններ, ինչպէս պետ. ժողովի պատգամաւոր Ա. Լ. Պի. Եզուիտ Իսպոսկի և ինչ.

— Պրոֆեսոր Էլլի դատապարտութեան գործն ևս բոլորովին վերջացած չի երևում: Անշուշտ այդ դատապարտութիւնը հաստատուելու և լրացնելու համար էր, որ 11—12 ապրիլի Փրայզիլիում ժողոված Բաւարիոյ արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները մի թուղթ ուղղեցին իրենց ստորագրեալ հոգևորականութեան՝ յանուն գիտութեան և մամուլի կողմից եկեղեցւոյ դէմ եղած ոտնձգութիւնները դատապարտելով: Այս նկատմամբ նոցա արձակած 6 վճիռներից առաջին երկուսն են. ա) Եկեղեցին և նորա Աստուծոց կարգուած պաշտօնէութիւնը, և ընչ միակ մի ուսումնական իրաւունք ունի որոշելու, թէ ինչ է կաթոլիկական ճշմարտութիւնը և ինչը հակառակ այդ ճշմարտութեան: Բ) Բոլոր իսկական կաթոլիկները, ա-

ռաւել ևս բոլոր քահանաները, պէտք է եկեղեցւոյ վճիռները կատարեալ և ներքին հնազանդութեամբ ընդունեն և ջերմեանդ արթնութեամբ աշխատեն շրջանուել այն նոր ցանցերի մէջ, որ հէնց այժմ ճշմարիտ հաւատոյ և ճշմարիտ կաթոլիկական հոգւոյ դէմ ձգում են. — Լրագրներում շուտ գրուեցու նաև այն մասին, թէ Էլլի առաջ պէտք է դնեն նորա գրուածներից քաղուած դատապարտելի կէտերը և պահանջեն, որ մի առ մի ետ առնէ բոլորը, թէ նորան ուսուցչապետութեան ամբիոնից պիտ զրկեն և ինչ.

— Իւր ժամանակին Արաւսի մէջ գրուել է Սաքսոնիայի Մաքս իշխանի քահանայական կոչումն ընդունելու մասին: Այժմ նա իւր գործունէութեան կենդանւում ընտրել է Բաւարիոյ Նիւրնբերգ քաղաքը, որի ընկիւնների մեծամասնութիւնը բողոքականներ են, և իւր ազդեցութիւնը գործ է դնում այստեղ կաթոլիկական գործը զանազան կասկածելի միջոցներով յառաջ տանելու՝ ստիպում է կաթոլիկ ընտանիքներին բողոքական բժիշկ շնորհունել, կաթոլիկ աղայիներին բողոքականների մօտ չձառայել և ինչ. Գի. քանի բողոքական թերթեր բուռն գայրոյթ են յայտնում այս առթիւ և զգուշացնում քահանայ իշխանին, որ չափաւորէ եռանդը:

— Պապական եկեղեցւոյ գլխաւոր ներկայացուցիչը Անգլիայում՝ կարգինալ Վ. Օդան, Վեստմինստերի արքեպիսկոպոսը, 6 ամիս ժամանակով Հռոմ է կանչուած և անմիջապէս նոր տեղապահ է կարգուած նորա փոխարէն: Ոմանք այս արտասովոր տեղափոխութիւնը համարում են նշան, թէ Վ. Օդան ապագայ պապական ընտրելիներից մէկն է:

— Յունաստանից մի ուխտագնացութիւն է պատրաստուում Հռոմ դիմելու համար, Որովհետև յոյն ուխտաւորների Հռոմ գնալը առաջին անգամն է՝ պապն առանձին հանդիսով կընդունէ նոցա:

— Իտալացի կենսաբան ուսուցչապետ Ալեքսնց Սարգինիայի մեծ եկեղեցիներից մէկի օրհնած ջուրը ընալուծական հետազոտութեան ենթարկելով՝ մեծ քանակութեամբ զանազան տեսակ վընասակար միկրորներ գտաւ նոցա մէջ, և ցոյց տուեց, թէ որչափ նպաստել կարող է այսպիսի ջուրը, ուր ամէնքը թաթախուած են իրենց կեդտոտ մատները՝ տարափոխիկ հիւանդութիւններ տարածելուն:

ԲՈՂՈՔԱՎԱԿՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Գերմանիա.

Մայիսի 24—26-ին Կիլ քաղաքում, որ Գերմանիոյ զինուորական նաւահանգիստն է և նորա հիւսիսային Էլբի գետից, — Հոլշտայն նահանգների ուսումնական զորոնավայրը իւր համալսարանով տեղի ունեցաւ

Ժ. Արեւմտեանիս—Համայնական Համագործակցութեան
ցեալ տարիները մեր տուած տեղեկութիւններով
աշխատել ենք պարզել, թէ ինչ բնաւորութիւն
ունի այս Համագործակցութեան և որչափ նպաստում է
ներկայումս քաղաքակիրթ աշխարհէն զբաղեցնող
հասարակական խնդիրներին մասին ճիշտ գաղափար
կազմելու։ Աստի կ'ընդհանրաւորաբար նկարագրու-
թիւնը և կանցնենք ուղղակի այստեղ կարգացուած
երկու գլխաւոր հրապարակախօսութիւններին, որ-
ոնք լինելով գերմանական գիտութեան երկու ա-
ռաջնակարգ ներկայացուցիչներ, Բերլինի համալ-
սարանի աստուածաբանական բաժնի ուսուցչապետ
Պաուսէնի համալից ուսումնասիրութեան արդիւն-
քը և ընդհանուր քրիստոնէական քաղաքակիրթ
աշխարհին վերաբերեալ խնդիրներ շօշափելով՝ շատ
հետաքրքրական են նաեւ հեռաւոր ընթերցողի հա-
մար, Սաֆտանի ընտրած նիւթն էր։ Առթեալական
եկեղեցւոյ յարաբերութիւնը դէպի համայնական
հարցը։ Մասնաւորապէս լուծեալականութիւնն ի
նկատի ունենալով՝ նա հարց է դնում իրօք ամբողջ
եկեղեցւոյ համար, արդեօք նա մի նոր կոչումն
ունի ժամանակակից համայնական խնդրի վերաբեր-
մամբ, թէ պէտք է միայն հնուց ունեցածը նոր
ժամանակին յարմարեցնէ։ Աւետարանը քննելով՝
նա գտնում է, որ Յիսուս և իւր աշակերտները
հասարակական խնդիրներին մէջ չեն խառնուել և
հին կարգերը փոփոխել չեն աշխատել։ քրիստո-
նէութիւնն առհասարակ կողմնակի կերպով է ազդել
արտաքին կեանքի վերայ, Թէպէտ նոր ժամանակի
իմաստութիւնը ուրանում է այդ ազդեցութիւնը,
բայց որ քրիստոնէութիւնը յեղաշրջել է ազգերի
կենցաղը՝ պարզ երևում է մանաւանդ երկու կէ-
տում։ աշխատանքի գնահատութիւնը սկզբունքով
փոխուել է և բոլոր մարդոց հաւասարութեան
սկզբունքը հաստատուել, Հին աշխարհի քաղաքա-
կիրթութեան անձանթ էին այս սկզբունքները, և
ամենին կասկած չի կարող լինել, թէ քրիստոնէու-
թիւնն է նոցա առաջ բերել, Միայն քրիստոնէու-
թիւնն է ուսուցանում որ Աստուած բոլորի հայրն է
և որ ուրեմն ամէնքը հաւասար են նորա առաջ,
քրիստոնէութիւնն է ուսուցանում, որ Աստուծոյ
համար նշանակութիւն ունեցող մարդու ինչ լինեն
է՛լ այն, թէ ի՞նչպէս է նա աշխատում և ո՞չ՝ որպի-
սի աշխատանք նա ունի, իսկ դորանով մեծ արժէք
է ստանում աշխատութիւնն ըստ ինքեան, մինչ
յոյները, հնդկները և ընտրահամարհում էին այն,
նոքաւ որոնք այս փաստը բաւական չեն համար-
ում և ցեղական կլիմայական յատկութիւններ
իրեն էական պատճառներ են ցոյց տալիս՝ մոռա-
նում են որ մարդկային պատմութեան մէջ հոգին ու
միտքն են էականը, իսկ այստեղ գլխաւոր տեղ է
բռնում Աստուծոյ գաղափարը, և քրիստոնէայ ժո-

ղովուրդները աւետարանի Աստուծոյ մասին տուած
գաղափարով են դարձել այն ինչ որ են։ Զանազան
դաւանութիւնների հասարակական կեանքի նկատ-
մամբ բռնած դիրքն ևս կատուած է նորանից, թէ
ինչպիսի ձեւակերպութիւն է ստացել Աստուծոյ
գաղափարը՝ կրօնն առհասարակ նոցա մէջ։ Միջնա-
դարեան կաթոլիկութիւնը սովորեցնում էր խոյս
տալ աշխարհից, կրօնաւորութիւնն իրեն գաղափար-
ական կեանք նկատել, բողոքականութիւնը քան-
գելով վանքերը՝ պահանջում է եռանդով աշխա-
տակցել ընդհանուր քաղաքակիրթութեան գործին,
անձնաւորութիւնը բաղմանկողմանի կերպով դարգա-
ցնել, նորա բոլոր ընդունակութիւններին ազատ
գործունէութեան ասպարէզ տալ, Սակայն լու-
ծեալական եկեղեցին հասարակական խնդիրների
նկատմամբ շատ աւելի քաշուած է պահում իրեն
քան Հռոմէականը, կամ ուրիշ որեւէ եկեղեցական
համայնք։ այդ յատաճ է գալիս նորանից, որ կաթո-
լիկական տեսակէտով եկեղեցին միակ սուրբ և օրի-
նաւոր հաստատութիւնն է և պէտք է օրէնք տալ
ամբողջ աշխարհին, մինչ լուծեալականութիւնը հա-
մարում է միւս հաստատութիւններն ևս՝ պետու-
թիւն, հասարակութիւն և ինչ նոյնչափ օրինաւոր, և
ուրեմն նոցա ներքին գործերի մէջ խառնուելն
անտեղի։ Այդ չի նշանակում հարկաւ, թէ նա
արտաքուստ բարոյական դաստիարակիչ ազդեցու-
թիւն չպէտք է գործէ նոցա վերայ, դա արդէն
ընդհանուր քրիստոնէական տեսակէտից անհրաժեշտ
պարտականութիւն է և դորանով կարելի է վերեւ
յատաճ բերած հարցի պատասխանը տալ, ներկայ
համայնական շարժումը սերտ կապ ունի քրիստո-
նէութեան հետ, աշխատանքի բարձր գնահատու-
թեան և մարդոց հաւասարութեան մասին տուած
աւետարանի գաղափարը ինչպէս խճոր ներգործել
է և հասարակական կեանքի բարենորոգման կարիք
յատաճ բերել, Եկեղեցւոյ պարտքն է ուրեմն ա-
ռանց իւր հին կոչումը մոռանալու նոր ուժով օգ-
նել այդ բարենորոգման, Խնդրի արտաքին տեսնի-
քական կողմի մէջ նա չպէտք է խառնուի,
այլ աշխատէ ամէնից առաջ բարենորոգումն իրեն
խղճի պահանջ ներկայացնել։ նա պէտք է քարոզի
միջոցաւ բարոյական ինքնուրոշումութիւն կրթելու
կարիքը շեշտէ և հետամտաւ լինի հոգեւոր վայելքի
ճաշակ զարթեցնելու։

Սաֆտանի ատենախօսութիւնն ընդունուեցաւ
բուն ծափահարութիւններով և շատ հետաքրքրա-
կան վիճարանութիւն տեղի ունեցաւ, որին մաս-
նակցում էին և նորանոր պարզաբանութիւններ ա-
ւելացրին Հառնակ, Նաուման և այլ ականաւոր ան-
ձինք, Ի միջի այլոց դր. Մաուրենրերխեր ուշադրու-
թիւն հրաւիրեց այն կարեւոր կէտի վերայ, թէ որչափ
զգուար է աւետարանական բարոյականութիւնը
ժամանակակից կեանքի մէջ գործադրել տալ, և միա-

ձայն ընդունուեցաւ նորա այս առթիւ արած հետեւեալ առաջարկութիւնը. «Համաժողովը համակերպելով ատենախօսի առաջնորդող մտքերին՝ ուղղում է զխաւորապէս կարգարանական աստուածաբանութեան ներկայացուցիչներին սրտեռանդն խնդիր, որ նորա աւելի քան ցայժմ զրադուեն այն հարցերով որոնք առաջ են եկել բողոքական բարոյագիտութեան համար մեր դարու համայնական շարժումից...»

Պատուէնի հրապարակախօսութեան նիւթն էր. «Կրթութեան գաղափարատիպի (իդէալ) փոխակերպութիւնները՝ իրենց համայնական զարգացման հետ ունեցած կապով, իսկ առաջնորդող մտքերն էին. ա) Իւրաքանչիւր ժամանակի իշխող կրթութեան գաղափարատիպը կախուած է հասարակութեան կազմակերպութիւնից, Գաղափարատիպի փոփոխութիւնները զուգընթաց հետեւութիւններ են հասարակական կեանքի փոփոխութիւններին, բ) Իւրաքանչիւր ժամանակի կրթութեան գաղափարատիպը պատկերացնում է մարդկային կատարելութեան այն չափը, որ տիրում է հասարակութեան առաջնորդող խաւերի մէջ. գ) Հասարակութեան առաջնորդող խաւերի կրթութիւնը հակումն ունի միշտ ստորին խաւերի մէջ թափանցելու՝ գիտակցական աշխատութեամբ թէ անգիտակցական հետեւողութեամբ. դ) Ում համար մեր ժողովրդի կրթութեան գաղափարատիպն է նորա բոլոր անդամների զարգացումը՝ ազատ բարոյական անձնաւորութիւններ լինելու, այսինքն ով ստրկութիւնն իրրեւ իրօք միշտ անհրաժեշտ հասարակական մի կարգ չէ ընդունում, նա չի կարող հակառակել կամենալ այդ ընական հակման (առաջնորդող խաւերի մտաւոր—բարոյական կրթութեան բոլոր ժողովրդի մէջ թափանցելուն), ե) Ով կամենում է, որ դերմ ազգը զօրեղ լինի և երկրիս ազգութեանց մէջ իւր ինքնուրոյն կեանքն յառաջ տանէ՝ նա պէտք է նպատակ դնէ ազգի բոլոր անդամների մտաւոր և բարոյական ուժերի զօրացումը: զ) Համայնական խնդիրը՝ ազգի ինքնապահպանութեան հայեցակէտից նայած, նոյն է, ինչ որ այն խնդիրը, թէ ինչպէս պէտք է ազգի աւելի ու աւելի փոփոխուող կեանքի պայմաններում ընտանիքն ընդունակ պահել կարող սերունդ կրթելու և ինչպէս պետութեան և հասարակութեան աւելի ու աւելի մեծ գործունէութեան շնորհիւ անխուսափելի պակասորդների տեղը լրացնելու:—Այս մտքերի վերայ հիմնուելով ատենախօսք մի առ մի բացատրեց կրթութեան գաղափարների կապը պատմական զանազան շրջանների հետ. միջնադարեան կղերական կրթութեան 17-րդ դարում հետեւում է պալատական կրթութեան, իսկ սորան 18-րդ դարի վերջում քաղաքացիական կրթութեան գաղափարատիպ: Մեր ժամանակի կրթութեան մէջ նա երեք ձգտումներ է տեսնում.

ա) Ազգային, որով իւրաքանչիւր նոյն իսկ փոքրիկ ազգութիւն աշխատում է իւր լեզուն և ինքնուրոյնութիւնը պահել զպրօքի մէջ, և այդպէս հին լեզուների նշանակութիւնն ընկնում է ու հանրամարդկային ուղղութեան փոխարէն մի տեսակ խորականութիւն է մտնում: բ) Գրական (աւելական), որով իշխող են դառնում բնական, գործնական գիտութիւնները և մատաղ սերունդին այլ ևս գաղափարները չեն զրադեցնում, այլ զօրութիւն կամ կարողութիւն ձեռք բերելու միջոցները: գ) Ժողովրդական—առավարական ձգտում, որի մէջ միանում են նախընթաց երկուսը և որով քանք է լինում մի ընդհանուր՝ նաև ստորին, չորրորդ դասակարգն իւր մէջ ամփոփող կրթութեան գաղափար ստեղծել: Կանգ առնելով ապա վերջին կէտի վերայ՝ Պատուէն կրթութեան ընդհանրացումը ներկայացրեց իրրեւ մի անհրաժեշտ բարիք ազգի համար և դորա դէմ եղած առարկութիւններն անտեղի: Ազգի մտաւոր կեանքը պահանջում է ասաց նա, որ առանց այն էլ շատ առատ լեզող տաղանդներն ամենուրեք յաջող պայմաններ գտնեն զարգանալու: Այդպէս և ազգի բարոյական ոյժը կախուած է բարոյական կրթութեան ընդհանուր լինելուց, որ իւրաքանչիւր անհատ որոշ չափով ստանում է զպրօքից: Մեծ զեղծում պէտք է համարուի այն հանգամանքը, որ երիտասարդ սերունդը 17—20 տարեկան հասակում, երբ կրթութեան ամենից աւելի պէտք ունի՝ բարձի թողի է լինում: Ցանկալի է որ առաջիկայ դարն աւելի սեր ու եռանդ ցոյց տայ կրթութեան գործի համար, Գաղաքացի դասի պարտականութիւնն է ստորին դասակարգին օգնութեան ձեռք մեկնել այս նկատմամբ: Այնպէս մեծ փափագ կրթութեան ինչպէս այժմ՝ երբէք չի եղել ամբոխի մէջ, նորա յառաջընթացութեան դէմ մենք առնել չենք կարող, հարց է միայն՝ արդեօք միւր յոժար կամքով պէտք է լինի այդ թէ հակառակ մեր կամքի: Ցանկալի էր, որ մեր կամքով լինի:

Այստեղ ևս համակրութեան զօրեղ արտայայտութիւններով ընդունուեցան նշանաւոր մանկավարժ—փիլիսոփայի խօսքերը, Վիճարանութեան մէջ մասնակցողներից աչքի էր ընկնում մանաւանդ Պրոֆ. Բաումգարտեն, որ աշխատեց պարզել, թէ ինչպիսի մեծ դժուարութիւնների պէտք է հանդիպէ գիտութիւնն ընդհանրացնելու ըստ ինքեան գեղեցիկ գաղափարը, մանաւանդ երբ խօսքը մեր ժամանակի էական գիտութիւնների՝ պատմական գիտութիւնների մասին է. և Ա. Ազգներ, որ կիսակրթութեան վնասակար հետեւանքների վերայ մատնացողը արաւ:

Բացի յիշեալներից ատենախօսեց նաև Բերլինցի գործարանատէր Փրիդէ, որ 15 տարեղ սեփական փորձերի վերայ հիմնուած աշխատեց ցոյց

տալ թէ ինչպէս կարելի է բանուորական յանձնաժողովներ կազմել՝ որպէս զի իւրաքանչիւր գործարանում աշխատողները իրենց շահերը պաշտպանող մի տեսակ ինքնավարութիւն ունենան, զանազան միջոցներ ձեռք առնեն խնայողութիւն անելու, վնասակար ազդեցութիւններ հեռու պահելու, փոխադարձաբար միմեանց օգնելու եւն։ Այս բաղմամբիւ Ճառաստութիւններ եղան ինչպէս համաժողովի նախընթաց, այնպէս և մանաւանդ երկրորդ երկնայեան, որ յատկապէս հասարակ գաւի՝ բանուորական ընկերութիւնների համար էր կազմակերպած։ Այստեղ եռանդագին ցոյցերով ընդունուեցաւ Պրոֆ. Գեյքրիւի, որին կառավարութիւնը մի քանի ամիս առաջ դատի ենթարկեց Հիւս. Գերմանիայում բնակուող օտարերկրացիների դէմ սկսուած հալածանքի առթիւ նորա գրած խիստ յարձակողական յօդուածների համար. մեծ ոգևորութիւն պատճառեցին նա և Հառնակի, Աագնեբի, Նաումանի ձառերը, Համաժողովից դուրս մասնաւոր ժողովներ նշոյալէս տեղի ունեցան, որոնցից մեկում՝ Հառնակի նախագահութեամբ կազմուած, որ. դր. Աինդշայդ խօսեց Գերմանիայում կանանց բարձր. կրթութեան տուած արդիւնքի մասին, — Համաժողովի քարտուղար Բորրախի ներկայացրած հաշուից երևում է, որ վերջին տարին նոր անդամների թիւը գրեթէ անփոփոխ է մնացել—650: Բայց Նիստերից յետոյ այդ թիւը մօտ 1/6-ով աւելացաւ։ Առհասարակ համաժողովի ընթացքը շատ յաջող էր, և երևում էր, որ նա բոլոր ներքին դժուարութիւններին յաղթել է և մի անհրաժեշտ հաստատութիւն դարձել։ Գրեց ևս զանազան կառավարական մարմիններ ու ընկերութիւններ աւելի հաշտ աչքով են նայում նորան, իսկ մամուլը առանձին ուղարկութիւն է դարձնում մանաւանդ Պաուլսէի տախտակաստութեան վերայ, որ ընդարձակ խորհրդածութեանց առարկայ եղաւ։

Գերմ. մամուլի մէջ վերջին ժամանակներս շատ է արծարծուում այն հարցը, թէ արդեօք քրիստոնէութիւնը կարող է սկզբունքով դէմ լինել մեռելներ այրելու սովորութեան։ Այս հարցը կրկին երկար փնտրանքութեանց նիւթ եղաւ նշանաւոր նկարիչ Պրոֆ. Աեւլիցենուսի մահուան առթիւ։ Աերջինս, որ քան տարի շարունակ աշխատում էր Պոսլարի հնագրեան երեւելի «Այսերական գահ» լիճք իւր գեղեցիկ նկարներով զարդարելու և մեծ անուն փաստակեց այդ նկարներով՝ վախճանուեց ապրիլի 25-ին 74 տարեկան հասակում, կտակելով որ շիճողնայ այլ այրեն իւր մարմինը Պոսլարի այդ նպատակի համար պատրաստած հնոցում։ Աեւլիցենուս յայտնի է եղել իւր կենքում իբրեւ խաղաղ ու երկնիզած մարդ և ջերմեռանդ քրիստոնեայ նորա նկարներից շատերը աւետարանից են

առնուած ու կրօնական ոգով ներշնչուած. մահից առաջ նա ցանկութիւն յայտնեց ս. հաղորդութիւն ընդունել և նորա վերջին խօսքերը յաւիտենական կենաց ակնկալութիւն էին արտայայտում։ Պարզ է ուրիմն, որ նորա կտակը հակաքրիստոնէական միտքով չէ եղել և նա չէ նախատեսել, թէ դորանով իւր եկեղեցւոյ ընդգէմ է գործում, եւ սակայն Հաննովերի կոնսիստորիան արգելեց եկեղեցական կարգ կատարել նորա վերայ, կառավարութիւն ևս մերժեց հրաժեշտի հանդէսը Այսերական գահի՝ ձուռ կատարելու խնդրը։ Միայն նորա մօտիկ բարեկամ մի պատուիր դամբանական խօսեց և աղօթեց զագաղի վերայ, և երաժշտութիւնը նուագեց եկեղեցական երգեր։ Յայտնի քրիստոնէի այսպիսի անշուք յուզականութիւնը ծանր տպաւորութիւն է թողել ներկայ եղողների վերայ, որոնք Պոսլարի համար անսովոր խուռն բաղմութեամբ ժողովուել էին հանգուցեալի յիշատակը յարգելու։ Հաս թերթեր ցաւ են յայտնում այս մասին և շատերը պնդում են, թէ ս. Գրքից չի կարելի ոչ մի վկայութիւն բերել, որով եկեղեցւոյ այսպիսի վերաբերումը դէպի դիակներ այրելու հարցը արդարացուէր։

— Հրատարակուեցաւ վերջապէս աագ ուրբաթ օրը ամրող երկրի մէջ տօն կատարելու օրէնքը, բայց վճռից ոչ բողոքականները գոհ մնացին և ոչ հարկաւ կաթոլիկները, Առաքիներն սպասում էին, որ տօնը պարտաւորեցուցիչ պէտք է լինի բոլորի համար, մինչդեռ օրէնքի մէջ ասած է, թէ կաթոլիկների մեծամասնութիւն եղած տեղերում նոքա կարող են իրենց գործերով պարագել, միայն տօնի լրջութիւնը խանգարող աղմկալից գործեր չլինեն, Վաթոլիկներն աւելն անգամ այսպիսի կարգադրութեանց մէջ ճնշում ու աշտուութիւն են տեսնում և, եթէ խնդրի ելքից գոհ անգամ լինեն՝ առիթ չեն փախցնում իրենց եկեղեցին հալածուած հռչակելու, մինչդեռ իրօք այժմ Գերմանիայում կաթոլիկ եկեղեցին աւելի արտօնեալ փիճակ ունի, քան իշխող բողոքականութիւնը։

— Մեկկներուրդ—Հարելիցի գքսուհի Իւտտան, որին նշանել է 2իրնագորիայի իշխանի ժառանգ Գանիլօն, փեսայի ցանկութեամբ պատրաստուում է օրթոդոքս դասնութիւն ընդունելու։ Բնականաբար այս որոշումը խիստ ցաւ կպատճառէր բողոքականներին և տեղական եկեղեցւոյ հոգեւորական ներկայացուցիչները պարտք համարեցին իրենց ցաւն ու բողոքը կոնսիստորիայի միջոցաւ յայտնել մեծ զուքսին, բայց վերջինս պատասխանեց թէ յարգելով հանդերձ նոցա զգացումները և լինելով անձամբ իւր եկեղեցւոյ հաւատարիմ զաւակը՝ մի քանի ծանրակշիւ հանգամանքների պատճառաւ ստիպուած է թող տալ, որ որոշումը կատարուի։

— Ապրիլի 28-ին Փրանկֆուրտում «Արևելքի քրիստոնիսաներին նպաստող բարեգործական դաշնակցութիւնը» ընդհանուր ժողով էր գումարել, որտեղ իւր գէմ եղած յարձակմանց գէմ հետեւեալ բացատրութիւնն է տուել, «Աւերջին ժամանակ Գերմանական գաշնակցութեան գէմ հանած մեղադրանքները ծառայում են միայն իրեն խիստ աւելի և աւելի եռանդով մեր բարեգործութիւնը յառաջ տանելու» այն համոզմամբ, որ այսպիսի թշնամութիւնը պատիւ է բերում մեր գործին, այն կողմից, որտեղից այս յարձակումները գալիս են, մենք գնահատութիւն չենք սպասում, որովհետեւ այդտեղ հասկացողութիւն չունին կատարելապէս անձնուրաց քրիստոնէական բարեգործութեան մասին, ուստի և կասկածելի դարձնել են աշխատում, ինչ որ չեն հասկանում Եւրաքանչիւր դր, ում ծանօթ է մեր գործը՝ գիտէ թէ ինչ արժէք ունին այնպիսի մեղադրանքները, ինչպէս որ որ մենք պաշտպանութեան և օգնութեան խոստումով Լուսաւորչական եկեղեցւոյ անդամներին Բողոքական եկեղեցւոյ անդամները, ինչպէս որ մենք սկզբունքով մերժել ենք Փոքր Ասիայում բողոքական համայնքներ կազմելը և երբէք մի լուսաւորչականի այս ճանապարհով իւր եկեղեցուց ելնելու պատճառ չենք եղել, Հայոց (Տաճկաստանի անշուշտ) եկեղեցւոյ գլուխը՝ Օրմանեան պատրիարքը ներկայ յարձակմանց առթիւ պարզորոշ յայտնել է, որ մեր գէմ ոչ մի բողոք և գանգատ չի արել, ինչպէս արել է յիւրաքանչիւր Ասիական ուրիշ տեղերի կաթոլիկ գործիչների համար — Այն առարկութեան գէմ, թէ մենք «անկարող ենք մեր վերայ առած գործը կատարել», կ'իշխենք միայն, որ մեզ յաջողել է ամենադժուարին պայմանների մէջ 2 տարուայ ընթացքում աւելի քան 1600 որբեր տեղաւորել մեր որբանոցներում և խնամել այլ և զանազան արուեստագործութիւնների՝ գորգ, մանուսալ, բանուածներ և լէն գործելու միջոցաւ կարողացել ենք աշխատանք և հաց մատակարարել հազարաւորների, որոնք սովմահաւթութեան էին գատապարտուած, Աւերջապէս «մեր զբամական միջոցներն աւելի կարեւոր և արդիւնաւէտ նպատակների համար գործածելու» խորհուրդը կարող են նոքա միայն տալ, որոնք Քահանայի և Աւետացու պէս աւագանների ձեռքն ընկածի մօտից անտարբեր անցնում են, կամ որոնց համար իրենց տեւորական շահերն աւելի օրինաւոր են թուում՝ քան խեղճերի բարիքը, Մենք համոզուած ենք որ Տաճկաստանին աւելի մեծ լաւութիւն ենք անում քան նոքա, որոնք այս թշուառ երկիրը միայն յարմար ասպարէզ են համարում առեւտրական ձեռնարկութիւնների համար, Գերմանական արևելքի քրիստոնէականներին նպաստող բարեգործական գաշնակցութեան ընդհանուր ժողովը միաձայն հաւանութեամբ որոշում է՝ աւելի մեծ

եռանդով և սիրով քան ցայժմ առաջ դնալ ընտրած աստուածային օրհնութեամբ հարուստ ասպարիզի վերայ»:

Նոյն գառն ամենայն ջերմութեամբ պաշտպանելով Preuss. Jahrbücher թերթի մէջ՝ Բորբախի քանի հետաքրքրական թուանշաններ է տալիս, 1895 թ.-ից ի վեր մօտ 10 միլիոն մարդ գրամ է գնացել Հայաստան, որից Գերմանիան տուել է 1896 թ. սեպտեմբերից մինչև 1899 թ. գարունը 1,800,000 մարդ, Այժմ մօտ 5000 հայ որբեր են խնամուում, որոնցից մօտ 2000-ը գերմանացիների հաշուով, Այս նպատակով շատ տարիների համար գերմ. յանձնաժողովների ձեռքը տուած է տարեկան 250,000 մ. ապահով գումար, որը ժողովուում է մի մի անձի կամ խմբի իւրաքանչիւր որբի համար 100 մ. նուիրելով, Բացի դրանից 100,000 մարդ ևս ազատ նուիրարեւութիւններով է ժողովուում, այնպէս որ տարեկան 350,000 մ գրամ է ելնում Գերմանիայից ի նպաստ հայերի: Եւ սակայն այս օգնութիւնը գոհացուցիչ չէ, որովհետեւ մնում են դեռ 20,000 որբեր, յետին թշուառութեան և 20,000 կարօտ վիճակի մէջ, Վատորածներից յետոյ ոչ նուազ քան 150,000 երեխաներ անհայր մնացին:

Գերմանական կառավարութիւնն այնքան անհամակիր և հակառակ է իւր հպատակ բողոքական պատորների գործունէութեանը Տաճկաստանում, որ սոցա առաջարկ է եղել ամբրիկացի միսիոնարների կողմից իրենց նպաստի գործը նոցա վերահսկողութեան և ուրեմն ամբրիկական գեապանատան պաշտպանութեան ներքոյ դնել, ինչպէս արդէն զուիցեցաւք արել են, Գուցէ Գերմ. գաշնակցութիւնն ստիպուած լինի և ընդունել այդ առաջարկը, բայց ի՞նչ տարօրինակ երևոյթ կ'լինի այդ, — Պատար Բրոկէս, որ վարիչն էր Բէրէկի որբանոցների Վ. Պոլսի մօտ՝ հրաման ստացած լինելով թողնել իւր պաշտօնը, յայտնում է այժմ, որ իրեն տաճիկ կառավարութիւնը չի հեռացնում, այլ ինքը հեռանում է կամովին՝ ըստ կամաց Գերմ. կայսեր: Սուլթանը Բրոկէսի քարոզութիւնները իւրամի համար վտանգաւոր է համարել և գանգատուել կայսեր, իսկ սա իմաց է տուել նորան իւր ցանկութիւնը, որ Գերմանիա վերադառնայ:

Անհետաքրքրական չէ անշուշտ այստեղ ի միջի այլոց իմանալ, թէ այն բրուտը, որի նաուամանին հաղորդած տեղեկութիւնները հայոց մասին մի ժամանակ մեծ ազմուկ հանեցին՝ սուլթանի պաշտին ամանեղէն մատակարարող է:

ԱՆԳԵԼԻԱՆ ԵՎ ԵՎԼԵՅԻՆ

Եկեղեցին պետութեան խնամակալութիւնից ըստ կարելոյն ազատ կացուցանելու ձգտումը, որ


վերջին ժամանակ աչքի ընկնող կերպով զորանում է, առանձին արտայայտութիւն գտաւ Անտրրորրիի նահանգի եկեղեցական ժողովի մէջ՝ միաձայն ընդունած մի վճռով: Այս ձգտումը կայ ունի օրուայ խնդիր դարձած ծիսական վեճերի հետ, որոնք զգալ են տալիս շատերին, թէ որչափ խորթ է աշխարհական ատեանները միջոցաւ այս կամ այն ծեսի կարեւորութիւնը որոշել և հոգեւորականի նորա նկատմամբ բռնած ուղղութիւնը դատի ենթարկել: Առաջարկուում է դորա փոխարէն սինոդներ հաստատել իրրե օրէնսդրական մարմին, որոնց գլուխ մի ընդհանուր սինոդ լինի: Բողոքովին խզել եկեղեցւոյ և պետութեան մէջ եղած կապը հարկաւ ոչ որ չի մտածում, որովհետեւ անգլիական եկեղեցին, իրրե պետական՝ շատ արտօնութիւններ ու առանձնաշնորհումներ ունի միւս եկեղեցւոյ համայնքների նկատմամբ: Արեւոր է համարուում նաև աշխարհականներին աւելի ընդարձակ իրաւունքներ տալ եկեղեցական գործերի մէջ մասնակցելու: Պժուար է միայն որոշել, թէ ովքեր են իրօք եկեղեցւոյ անդամ: Իսկ դորա համար ամենից ապահով միջոց համարուում է ձայնի իրաւունքը տալ միայն նորան: ով ս. հագորդութիւն է ընդունում: Եկեղեցւոյ անկախութեան ջերմ պաշտպան է ի միջի այլոց պետական ամենազգեցիկ անձերից մէկը՝ գանձի լորդ՝ Բալֆուր, որ առանձնապէս հետաքրքրուում է ատուածաբանութեամբ և եկեղ. խնդիրներով: Ցարօրինակն այն է սակայն, որ մինչ պետական եկեղեցին պետութեան ազդեցութեան դէմ մաքառել է կամենում՝ ազատ եկեղեցիներն ընդհակառակը ջանք են գործ դնում պետական իշխանութեան ուժով ծիսական նորմուծութիւններն արգելել: այս առթիւ մի քանի ծայրայեղութեան հասնող առաջարկներ են եղել վերջերս ազգային ժողովի աստիճան պալատում:

— Մեծ աղմուկ է հանել Անգլիայում այն գեպքը, որ երկու առաջնակարգ օրաթերթեր The Daily Telegraph և The Daily Mail համարակուել են կիւրակնօրեայ համար հրատարակելով նուիրական օրուայ հանգստութիւնը խանդարել: Թէպէտ մինչև այժմ՝ ևս մանր թերթեր կիւրակ օրը լոյս էին տեսնում բայց ոչ որ նոցա վերայ ուշադրութիւն չէր դարձնում: այժմ՝ երբ հրապարակ են ելնում երկու մեծ թերթեր՝ միւսներն ևս, որոնք կիւրակէն սուրբ էին պահում ստիպուած պիտ լինին կամայ ակամայ հետեւել նոցա՝ իսկ դորա հետեւանքն այնչափ զգալի է անգլիական ժողովուրդի համար, որ անթիւ բողոքներ եղան ժողովներում, ընկերութիւններում: Ժամերգութեանց միջոցին՝ յանգուզն թերթերի դէմ՝ այնպէս որ նոցանից մէկը Daily Mail շտապեց տեղի տալ և դադարեցնել կիւրակնօրեայ հրատարակութիւնը՝ ուշադրութիւն առնելով մանաւանդ լորդ Ռոդերիկ բողոքը:

միւսն առժամանակ յամառելուց յետոյ ստիպուած եղաւ հետեւել նորա օրինակին: Ասում է, թէ մինչև իսկ Անտրրորրի արքեպիսկոպոսը կամենում էր եպիսկոպոսներին ժողովի հրաւիրել՝ այս խնդրի նկատմամբ անելիք քայլերի մասին խորհրդակցելու: Եկեղեցիներում և կիւրակնօրեայ դպրոցներում ահագին խմբերով մարդիկ (200,000 ուսուցիչներ և 2 միլիոն աշակերտ) խօսք են տուել ոչ մի համար յիշեալ թերթերից չգնել, մինչև որ նոցա աւանդութիւնը չվերականգնեն: և ընդհանուր տրամադրութեան ազդեցութիւնը պարզ երեւացել է նորանից, որ կիւրակնօրեայ համարները համեմատաբար խիստ քիչ են վաճառուել: «Սորանով, ասում է Christian World թերթը, կրօնական զգացումն Անգլիայում մի աչքի ընկնող յաղթութիւն է տանում: Այնպիսի մի ժամանակ, որի վերայ աւելի ու աւելի իշխող է հանդիսանում հասարակական կարծիքը՝ առօրեայ մամուլն ըստ երեւութի միանդիմադրելի ոյժ է ներկայացնում: Բայց այդ մամուլն այժմ գտնում է յանկարծ, որ երկրի մէջ դեռ մի ուրիշ ոյժ կայ, որ իրենից աւելի մեծ է, որի դէմ կռուելը կամ որն անուշադիր թողնելը կարող է օրհասական հետեանք ունենալ իւր համար: Ազգի կրօնական գիտակցութիւնն է այդ, որ սնուցանում և պահպանում են եկեղ. համայնքները:—Այս առթիւ Ամերիկայից գրում են, որ այնտեղ ևս երբ կիւրակնօրեայ հրատարակութիւններն սկսուեցան՝ խմբագիրները խոստանում էին ըստ ամենայնի լրջութիւն պահպանել և հասարակութեան կրօնական զգացումները չվիրաւորել: Բայց քիչ ժամանակ միայն պատշաճութեան սահմանների մէջ մնալուց յետոյ շուտով ապակառութեան մատնուեցան և այսօր բողոքովին սանձարձակ կերպով հրատարակում են այնպիսի նիւթեր, որոնց համար ուրիշ երկրներում բանա կնատեցնէին: Աւրեմն անգլիացի ժողովուրդի վրդովմունքը զուր չէր և տարած յաղթութեամբ եկեղեցին նոր ոյժ է ստանում նորա բարոյական զարգացման համար աշխատելու:

—«Առիւծը Գանիէլի գլուխ վերնագրով մի յօդուածի մէջ Chr. world թերթը նկարագրում է, թէ ինչպէս նշանաւոր 2էշի Բոգէս ներկայ է եղել և խօսել «Փրկութեան բանակի» մի ժողովում: Նորան ժողովին ներկայացրեց Լոնդոնի քաղաքագլուխը՝ պաշտօնական զգեստ հագած և շքանշաններով, խօսեցին Լորդ Արքեպիս, Լորդ Մոնկսփուիլ և Նիլ: Եթէ այսպիսի մարդիկ անպատուութիւն չեն համարում «Փրկ. բանակի» ժողովում լինել՝ պարզ նշան է այդ, թէ որչափ նշանակութիւն է ստացել նա և գնահատութիւն գտել: Խօսելով յաւակի հար. Ափրիկէում ունեցած գործունէութեան և ցոյց տուած ծառայութեանց մասին՝ Բոգէս ասաց, որ անտեղի է քննադատութեան ենթարկել նորա գործունէութեան եղանակը, բա-

նեցրած արտաքին ձեւերը. թող իւրաքանչիւր եկ-
համայնք գործէ ինչ եղանակով կուզէ, միայն թէ
անձնուէր սիրով լինի գործածն, ինչպէս այստեղ:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ԻՆՉՊԷՍ ՊԷՏԻ Է ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԵԼ
ՀԱՒԱՏՐ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ.

ԱՐԱՐԱՏԻ մայիս 5-ում մենք աշխա-
տեցինք լուրջ ուշադրութիւն հրաւիրել այն
տխուր վիճակի վերայ, որ մեր ժողովրդի
կրօնական—եկեղեցական կեանքն է ներկա-
յացնում. քայց զոր չէ արդեօք առհասա-
րակ այսպիսի խնդիրներ արծարծելու համար
թափած աշխատանքը: Չէ որ միեւնոյն է.
ինչ կուզես խօսիր, դիմացինդ իւր հին երգն
ունի, որ պէտք է երգէ, եւ ո՛չ մի պատճա-
ռաբանութիւն թեր լինի թէ դէմ նորան
կանգնեցնել կամ ծայրը փոխել տալ չի կա-
րող. նորա միտքը քան հասկանալ ու հաս-
կացնել չէ, այլ միայն իւր շնորհքը, իւր ծայնի
գործութիւնը ցոյց տալ: Մի անգամ ընդ միշտ
որոշուած է, որ աշխարհիս բոլոր մտածուած
ու շմտածուած յանցանքների մէջ մեղաւորը
ինչ է. ուրեմն երբ խօսքը կրօնի եւ եկե-
ղեցւոյ մասին է՝ կարելի է առանց այլեւայ-
լութեան մի շարք **ԻՆՉՊԷՍ** մեղքեր թուել,
եւ ամէն բերան փակուած կլինի: Հազար ա-
ռա թէ այլ բոլորն իմացանք. ընդունում
ենք, որ մենք **ԻՆՉՊԷՍ** չափ մեղքեր ունինք՝
չափ մեղքեր ունինք՝ արածի համար էլ ենք
մեղաւոր, շարածի համար էլ թէկուզ նորա
համար էլ, որ ջրերը ցամաքել են, երկնքից
անձրեւ չի գալիս. խօսքը դորա մասին չէ,
մեզ արդարացնելու մասին այլ թէ ինչպէ՞ս
մի ընդհանուր շարիք մէջ անդից պէտք է վե-
րացուի: Դուք առաջուց գիտէիք, մենք այժմ
ենք իմացել. շատ անգամ ասել էք՝ չենք լսել

այժմ՝ պատրաստ ենք լսելու. այժմ էլ չենք
լսում՝ մեզ մի նայէք, դուք ուղիղը ցոյց տուէք եւ
արէք, կամայ ակամայ ետեւից կգանք: Բայց
ո՛ւմ կասես... Դուք կղերականներդ... դուք
աստուածաբաններդ... դուք...:

Եւ այնտամենայնիս խօսել ու խորհրդա-
ծել պէտք է այս խնդիրների մասին: Այո՛,
մենք ասել եւ պնդում ենք, որ եթէ եկե-
ղեցւոյ վարիչների դէմ եղած բողոքները լսելի
չեն եղել եւ նոցանից պահանջուած քարենո-
րոգումները զուիւ չեն եկել՝ մի գլխաւոր պատ-
ճառն այն է, որ իրենք բողոքողներն ու պահան-
ջողները պարզ գաղափար չեն ունեցել, թէ
ինչ են պահանջում եւ ո՞ւմնից: Մեր պահան-
ջող ու քննադատող երիտասարդութիւնը իւր
կրթութիւնն ստացել է օտար դպրոցներում եւ
ինչ որ այնտեղ դուրսը մի որոշ ժամանակամի-
ջոցում՝ իբրեւ նորագոյն ճշմարտութիւն քա-
րոգուել է՝ նորա համար պատգամ է դարձել,
եւ նա շատ անգամ՝ դեռ հասարակական աս-
պարէզ չելած՝ աշակերտի կամ ուսանողի
նստարանի վրայից սկսել է այդ պատգամը հըն-
չեցնել ի սփիւռս Հայաստան աշխարհի եւ
պահանջել, որ իւր խաւարի մէջ մնացած
հայրենակիցներն ի բթթել ական լուսաւո-
րուին, նոր ճշմարտութեան ցոյց տուած ճա-
նապարհով գնան: Վաթսուհական թուական-
ներին ընդհանուր ազատամտական ուղղու-
թիւնն էր իշխում, եւ ահա ազատամտական
գաղափարներ հեղեղեցին ու մի քանի տաս-
նեակ տարիների ընթացքում ողողեցին մեր
երկիրը. այժմ համայնական խնդիրն է լու-
սաւոր եւրոպայում սպառնալից զուիւ քար-
ծրացրել եւ արդէն առատութեամբ ցանում
են մեզանում՝ այն արմատական մտքերը,
որոնք բուն աննպակայրում դեռ արմատ չեն
բռնել: Բաւական է որ մի միտք **ԻՆՉՊԷՍ** լինի.
ո՞վ է հարցնում՝ այլ եւս, թէ որչափ իրօք
ճշմարիտ է այն, որչափ իրագործելի մեզ
տուած պայմաններում:

Զատասուն տարի առաջ պահանջեցին
առում են, որ աւետարանն աշխարհաբար
թարգմանուի: Ինչո՞ւ մինչեւ այժմ՝ չթարգ-
մանուեցաւ. մենք եւս հարցնում ենք՝ ինչո՞ւ:
Մտածել էր արդեօք Մոսկուայում նստած
պահանջողը, թէ ո՞վ պէտք է թարգմանէ, եւ